

Կարծիք

Լիլիթ Ռազմիկի Հակոբյանի «Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի լեզուն» աշխատանքի վերաբերյալ

Լեզվի պատմության որևէ ժամանակահատվածի գիտական նկարագրությունն ամբողջացնելու առումով կարևորվում են տվյալ ժամանակաշրջանի գրական հուշարձանները, որոնց լեզվական ատաղձի համաժամանակյա ուսումնասիրությունը բացահայտում է ոչ միայն լեզվի տվյալ գոյավիճակի բառաքերականական իրողությունների ստատիկ վիճակը, այլև վեր է հանում լեզվական իրողությունների փոփոխությունների դինամիկան՝ հող նախապատրաստելով լեզվի տարժամանակյա ուսումնասիրության համար:

Այդ առումով, լեզվի հետգրաբարյան գոյավիճակի առաջին հատվածի լեզվական նկարագրության համար կարևոր նշանակություն ունի ԺԳ դարի պատմիչ, եկեղեցական, հասարակական գործիչ Կիրակոս Գանձակեցու պատմագիտական աշխատությունը՝ «Պատմութիւն Հայոց» երկը, որի լեզվի ուսումնասիրությանն է նվիրված Լ. Հակոբյանի ատենախոսությունը:

Իր հետազոտության ընթացքում ատենախոսը փորձել է առանձնացնել բառապաշարի այն շերտերը, որոնք վկայված են Գանձակեցու երկում (գրաբարից ավանդված բառեր, հետգրաբարյան բառաշերտ), արձանագրել բառապաշարային և քերականական այն իրողությունները, որոնք շեղվում են դասական հայերենի նորմատիվ ձևերից, համապատասխան փաստերի հիման վրա դիտարկել հետագա փոփոխությունների միտումները, ներկայացնել քերականական զուգաձևությունները և բնութագրել պատկերավորման համակարգի առանձնահատկությունները:

Ուսումնասիրությունը կատարվել է հետազոտության նկարագրական-վերլուծական մեթոդով, ինչպես նաև կիրառվել են լեզվական իրողությունների համադրման համաժամանակյա և տարժամանակյա մեթոդները:

Ատենախոսը համաժամանակյա մեթոդով ցույց է տվել հայերենի լեզվական իրողությունների համապատկերը ԺԳ դարի շրջանակներում, տարժամանակյա մեթոդի կիրառմամբ փորձել է ներկայացնել լեզվական որոշ իրողությունների

փոփոխությունների միտումները և ուղղությունները՝ դրանք դիտելով լեզվի պատմական զարգացման հետևանք:

Իր ամբողջության մեջ սույն հետազոտությունը ԺԳ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի ամբողջական, բազմաշերտ քննության առաջին փորձն է, որի շրջանակներում ստենախոս Լ. Հակոբյանը համակողմանի քննության է ենթարկել Գանձակեցու երկի բառագիտական, ձևաբանական, շարահյուսական և ոճաբանական մակարդակների յուրահատկությունները:

Ստենախոսության առաջին գլուխը վերաբերում է Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի բառապաշարի քննությանը՝ ծագումնաբանական և ձևաիմաստային կտրվածքներով: Բառապաշարի ծագումնաբանական խմբերը դիտարկելիս ստենախոսն անդրադառնում է երկի բառային կազմի՝ գրաբարից ավանդված բառերին և հետգրաբարյան բառաշերտին, ինչպես նաև դրանց վերաբերյալ տարբեր լեզվաբանների տեսակետներին: Երկի բառապաշարի ձևաիմաստային խմբերը ներկայացված են հոմանիշների, հականիշների և համանունների խմբերով՝ ընդգծելով դրանց գործառական – ոճական նշանակությունը:

Ստենախոսն այս բաժնում կատարում է ձևաիմաստային խմբերի արժևորում՝ նկատելով, որ համանունության որոշ օրինակներ բնորոշ են հենց միջին հայերենին:

Երկի բառակազմական օրինաչափությունները դիտարկելիս անդրադառնում է բառաբարդամբ և ածանցամբ կազմված բաղադրություններին և վեր է հանում այն բառակազմական օրինաչափությունները, որոնք բնորոշ են գրաբարին ու միջին հայերենին:

Աշխատանքի երկրորդ գլուխը վերաբերում է Գանձակեցու երկի ձևաբանական առանձնահատկությունների քննությանը, որտեղ դիտարկվում են գրաբարյան և միջինհայերենյան հոլովման համակարգերի առանձնահատկությունները, թվակազմական ձևայինների գործառական արժեքը, ածականի, թվականի, դերանվան և բայի դիմավոր ու անդեմ ձևերի գործածությունը:

Ստենախոսության երրորդ գլուխը վերաբերում է Գանձակեցու երկի շարահյուսական առանձնահատկությունների բացահայտմանը, որտեղ դիտարկվում են նախադասությունների կապակցությունը (նախադասության անդամների համաձայնություն, շարադասություն), անդեմ նախադասություններին ու նրանց տեսակներին, անդրադառնում է անվանական և բայական անդեմ

նախադասություններին, դրանց կառուցվածքային տեսակներին: Դիտարկվում են երկու գործածված բարդ նախադասություններ, նրանց տեսակները և այլն:

Ատենախոսության չորրորդ գլուխը նվիրված է «Պատմութիւն Հայոց» երկի ոճական առանձնահատկությունների բացահայտմանը: Ատենախոսն անդրադարձել է պատկերավորման համակարգի այն միջոցներին (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, հակադրություն), որոնք կիրառել է 13-րդ դարի պատմիչը, և որոնց շնորհիվ պատմագրական երկը ձեռք է բերել նաև գեղարվեստական արժեք:

Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի լեզվի քննությանը նվիրված սույն ատենախոսությունը հայագիտության համար ունի կարևոր տեսական ու գործնական նշանակություն. ատենախոսության մեջ դիտարկված նյութը կարող է օգտակար լինել հայոց լեզվի պատմության, պատմական բառակազմության, լեզվի բառային կազմի տարատեսակ դասակարգումների, ինչպես նաև պատմական քերականության հարցերով զբաղվող մասնագետների համար:

Աշխատանքի վերաբերյալ մեր կարծիքը դրական է. կատարված է զգալի աշխատանք, որ յուրովի ամբողջացնում է լեզվի զարգացման հետզբաբարյան գոյավիճակի նախնական փուլի լեզվական պատկերը՝ ցույց տալով մի կողմից՝ լեզվական նորմայի կայունությունը, մյուս կողմից՝ լեզվական համակարգի փոփոխությունների միտումները՝ նույն նորմայի պարտադրանքով:

Աշխատանքի վերաբերյալ ունենք որոշակի նկատառումներ, որոնք կարող են օգնել ատենախոսին աշխատանքը լրամշակման ենթարկելիս և այն հրատարակության պատրաստելիս:

Մեր դիտողությունները կարելի է ներկայացնել երկու կտրվածքով.

Ա. *Աշխատանքի քննության առարկայի սահմանափակում*. նկատի ունենք Գանձակեցու հնչյունական համակարգի, հեղինակային նորակազմությունների և ոճական համակարգի որոշ հնարների անտեսումը:

ա) Պատմական երկի լեզվական քննությունը ենթադրում է նաև հնչյունական իրողությունների մեկնաբանություն՝ ըստ ժամանակաշրջանի տվյալների (երկբարբառների, եռաբարբառների փոփոխություններ և այլն: Ատենախոսության մեջ այդ հարցերը բաց են մնացել:

բ) Կատարելով Գանձակեցու երկի բառային կազմի կաղապարային քննություն՝ ատենախոսը չի անդրադառնում հեղինակային նորակազմություններին. արդյոք

Գանձակեցին որևէ նոր բառ չի ստեղծել՝ ելնելով հայերենի բառակազմության օրենքներից:

գ) Գրաբարի նկատմամբ տարժամանակյա զուգահեռ անցկացնելիս անհրաժեշտ է անդրադառնալ հինհայերենյան ոճական այնպիսի հնարների գործածությանը, ինչպիսիք են՝ պեսպիսություն, ավելադրություն (գոյականական և բայական), վերացականը թանձրացականի փոխարեն և այլն:

Այս կարգի հարցերի քննությունը որոշակիորեն կարող է լույս սփռել 13-րդ դարի հայերենի հնչյունական և շարահյուսական համակարգերի, մասնավորապես ոճական համակարգի, նրա բաղադրիչների իրացման գործառական հնարավորությունների վերաբերյալ:

Բ. *Մասնագիտական որոշ աղբյուրների անտեսում*, որ վերաբերում է նախամիջին և հետգրաբարյան շրջանների պատմիչների երկերի ուսումնասիրություններին, ինչպես նաև հին հայերենին վերաբերող մասնագիտական գրականությանը:

ա) Կարծում ենք՝ ատենախոսը պետք է անդրադառնար ինչպես նախամիջին հայերենի ենթաշրջանի՝ Սեբեոսի (Գ. Բաղդիշյան), Ղևոնդի (Լիլիթ Խաչատրյան), Ստեփանոս Ասողիկի, Հովհ. Դրասխանակերտցու (Շողիկ Ղուկասյան), այնպես էլ հետգրաբարյան շրջանի պատմիչների երկերի լեզվական արվեստին նվիրված աշխատանքներին՝ Ստ. Օրբելյան (Անի Ավետիսյան) և այլն. դրանք կարող էին հետազոտության ուղի ցույց տալ կամ որոշ հարցերում կողմնորոշել ատենախոսին:

բ) Գրաբարի բառային կազմի իմաստների բացատրության հարցում ատենախոսն անտեսել է հանրահայտ ՆՀԲ և ԱԲ բառարանները, որոնք անկյունաքարային նշանակություն ունեն հին հայերենի բառիմաստները մեկնաբանելու առումով, մանավանդ որ ՆՀԲ նաև պատմական բառարան է, որ բառիմաստները տալիս է ըստ դարերի. արդյոք Գանձակեցու գործածած որևէ բառի նոր իմաստ չի վկայում այդ բառարանը:

Մենք ատենախոսի ուշադրությունը սևեռում ենք այս հարցերի շուրջ, որպեսզի հետագա աշխատանքի ընթացքում դրանք նկատի ունենա: Այն, ինչ կատարել է հայցորդ Լ. Հակոբյանը, հայոց լեզվի պատմության մեկ հատվածի լեզվի գիտական ուսումնասիրության հաջողված փորձ է, որ արժանի է դրվատանքի և բարձր գնահատականի: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը.

իսկ հրապարակված հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Իբրև ամփոփում կարող ենք ասել, որ Լիլիթ Ռազմիկի Հակոբյանի «Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի լեզուն» աշխատանքն աչքի է ընկնում գիտականությամբ, շարադրանքի պատշաճ ոճով, այն ունի տեսական ու գործնական կարևոր նշանակություն և բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները, համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին՝ Ժ.02.01 – «Հայոց լեզու» մասնագիտությամբ, ուստի միջնորդում ենք Հր.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 019 մասնագիտական խորհրդի առջև՝ նրա հեղինակին շնորհելու քանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

(Լ.Մ. Խաչատրյան)
30.08.2022.

